«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ **ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ**

Հետազոտող ուսուցիչ՝Քնարիկ Քաջիկի Հարությունյան

Արմավիրի թիվ 8 հիմն. դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Արմինե Անտոնյան

ԱՐՄԱՎԻՐ- 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ.1 ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

1.1 Կրտսեր դպրոցականի աշխատունակության բարձրացումն ու հետաքրքրությունների բավարարումը դասապրոցեսի ընթացքում.....5

1.2 Խաղային տեխնոլոգիաների կիրառումը՝ որպես կրտսեր դպրոցականին մոտիվացնելու միջոց.....11

1.3 Խաղային տեխնոլոգիաների կիրառումը՝ որպես կրտսեր դպրոցականին մոտիվացնելու միջոց.....15

Եզրակացություններ.....17

Առաջարկություններ.....18

Օգտագործված գրականության ցանկ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Վատն է այն աշակերտը,
որը ուսուցչին չի գերազանցել»

ԼԻՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ

Աշխարհաճանաչողությունը սկսվում է ընտանիքում: Երեխան փորձում է ամեն կերպ բավարարել սեփական հետաքրքրությունները՝ կուտակելով նոր հմտություններ ու կարողություններ, իսկ ահա սոցիալականացումը երեխայի կողմից շրջապատի սոցիալական նորմերի յուրացման գործընթացն է, որը սկսվում մանկապարտեզում, իսկ ավելի է կանոնակարգվում դպրոցում: Կրտսեր դպրոցական տարիքում երեխայի սոցիալականացման ամենակարևոր կողմերից են նրա խոսքի և հաղորդակցական կարողությունները, ուսուցչի ու ընկերների հետ անկաշկանդ շփումը, ստեղծագործականության ձևավորումն ու զարգացումը: Սակայն այս տարիքային խմբի սովորողների համար շատ կարևոր նշանակություն ունի նաև մոտիվացիան, սովորելու գործընթացին գիտակցաբար մոտենալու ունակությունը, սեփական պարտականություններն անտրտունջ կատարելու պատրաստակամությունը:

Այս համատեքստում իր առանցքային դերակատարումն ունեն տարրական օղակում դասավանդող ուսուցիչները: Անչափ կարևոր են մանկավարժի մասնագիտական կարողությունները, հմտությունները, սերը դեպի իր մասնագիտությունը, որոնք այն գրավականներն են որ մանկավարժն իրապես կհաջողի իր աշխատանքում:

Սակայն որպեսզի սովորողին հետաքրքրի դասապրոցեսը, քննարկումները, առաջադրանքները, դրանք պետք է համապատասխանեն սովորողի ներաշխարհին, նախասիրություններին ու հետաքրքրություններին, ուստի սովորողների համար կարևոր այս շրջափուլում ուսուցիչը պետք է մանրամասն պլանավորի դասի ընթացքի յուրաքանչյուր բաղադրիչ, համապատասխանեցնի դրանք սովորողի տարիքային առանձնահատկություններին, կիրառի դասի զանազան տիպեր ու մեթոդներ՝ այդ թվում խաղայիյն տեխնոլոգիաներ: Միայն այդպես կրտսեր դպրոցականին հնարավոր կլինի բերել դեպի դաս, ցույց տալ, որ սովորել կարելի է նաև խաղալով, հետաքրքիր հոլովակ դիտելով, հեքիաթ ու առակ լսելով: Միևնույն

ժամանակ գործնական դասերի, ակտիվ ու փոխգործուն մեթոդների, նախագծային աշխատանքների օգնությամբ անհրաժեշտ է վերջինիս տալ այն համոզմունքը, որ ինքը կարող է ընտրել ուսուցման այն տարբերակը, որն իրեն առավել շատ է հետաքրքրում՝ դառնալով իր իսկ իր ուսումնառության անմիջական կազմակերպիչն ու ճարտարապետը:

Այսպիսով, կարծում ենք, որ կրտսեր դպրոցական տարիքի սովորողին մոտիվացնելու բարդ ու միևնույն ժամանակ հետաքրքիր պատասխանատվությունը դրված է հիմնականում ուսուցիչների վրա, իսկ թե որքանով ուսուցչին կհաջողվի հասնել դրական արդյունքի, մեծապես կապված է նրա մանկավարժական որակներից, մեթոդական զինանոցից ու արժեհամակարգից:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Սույն հետազոտության արդիականության համար հիմք է հանդիսացել ուսումնական գործընթացում կրտսեր դպրոցականի մոտիվացիայի, աշխատասիրության և աշխատունակության բարձրացման կարևորությունը ՝ այդ թվում խաղային տեխնոլոգիաների կիրառության շնորհիվ, ինչպես նաև այդ գործընթացում ուսուցչի դերն ու կառուցողական մոտեցումները:

Հետազոտության նպատակը: Մեր նպատակն է ուսումնասիրել դասի ընթացքում ուսուցչի կողմից կիրառվող խաղային տեխնոլոգիաների ազդեցությունը կրտսեր դպրոցականի ուսուցման, դաստիարակության, կարողականությունների ու արժեհամակարգի ձևավորման վրա:

Հետազոտության խնդիրը: Ցույց տալ խաղային տեխնալոգիաների կիրառման օրինակներ՝ նպատակ ունենալով հիմնավորել մեր այն պնդումը, որ այդօրինակ մոտեցումները կարող են մոտիվացնել կրտսեր դպրոցական տարիքի սովորողներին:

ԳԼՈՒԽ 1 ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

1.1 Կրտսեր դպրոցականի աշխատունակության բարձրացումն ու հետաքրքրությունների բավարարումը դասապրոցեսի ընթացքում

Կրտսեր դպրոցական տարիքի աշակերտների համար ուսումնական գործընթացը հետաքրքիր է, արդյունավետ մի շարք գործոնների առկայության պարագայում, դրանցիվ են՝

- Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը;
- Ուսումնական գործընթացի հասանելիությունը;
- Սեփական հետաքրքրությունները դասի ժամանակ գտնելու և բավարարելու հնարավորությունը;
- Ուսուցչի կողմից գնահատված լինելն ու խրախուսվելը;
- Դասընկերների հետ լավ ու բարեկամական հարաբերությունները;
- Դասի դինամիկան;
- Իր ներգրավվածության աստիճանը գործնական, խմբային աշխատանքների ընթացքում;
- Ինքնուրույն գործելու իր հնարավորությունները դասի ժամանակ;
- Ուսուցչի դրական կերպարը;
- Դասի ժամանակ կիրառվող մեթոդներն ու դասի անցկացման եղանակները;
- Առողջ մրցակցության առկայությունը դասընկերների միջև:

Այս գործոններն են պայմանավորում, թե որքանով սովորողին կհետաքրքրի ուսումնական առարկան և ինչ չափով նա կկարողանա հասնել կրթական չափորոշչային վերջնարդյունքներին: Հաշվի առնելով վերը թվարկած գործոնները՝ պետք է նկատենք, որ սովորողը դասին ակտիվ է, մոտիվացված, եթե զարգացած է վերջինիս կապակցված խոսքը, ստեղծագործական մտածողությունը, պատմելու, վերլուծելու կարողությունները:

Բանավոր խոսքը անհատի մտավոր կարողությունների կարևոր դրսևորումներից է: Դրա զարգացումը տեղի է ունենում մարդու կյանքի ընթացքում և անընդհատ ենթարկվում է մշակման, ուստի հետևողական լինելը պարտադիր է: Հնրակրթական դպրոցի տարրական օղակում բանավոր խոսքի զարգացումն հենվում է բացառապես լեզվի իրական գործառության վրա: Բանվոր խոսքին տիրապետում են խոսելու միջոցով և կարևոր խնդիր է, երբ սովորողին իր խոսքի

նկատմամբ ներշնչում ենք վստահություն և տալիս հնարավորություն անկաշկանդ խոսելու և արտահայտվելու: Շատ կարևոր է, որ այս ճանապարհին ուսուցիչը ցուցաբերի առավել զգոնություն: Սովորողի համար պետք է անընդհատ ապահովել շփման ու հաղորդակցման համար լիարժեք պայմաններ:

Այստեղ կցանկանանք նշել սովորողի պատմելու կարողության զարգացման համար տարվելիք աշխատանքի կարևորությունը: Պատմելու ժամանակ պետք է արտացոլվի աշակերտի զգացողությունները, մյուս աշակերտների մոտ հետաքրքրություն առաջացնելու ցանկությունը, հիացմունքը, ուրախությունը: Եթե աշակերտը «մտել է դերի մեջ», ապրումակցում է պատմվածքի հերոսներին, եթե պատմելու ընթացքում նկատվում են նրա զգացմունքները, ապա պատմելու ստեղծագործական մակարդակը բարձր է[1]: Վերջնարդյունքում այս ամենը աշակերտին օգնում է գիտակցել շարադրանքի բարոյական կողմը և ձևավորել անհրաժեշտ բարոյական համոզմունքներ:

Պրոֆեսոր Ջուլիետա Գյուլամիրյանը իր գրքում առանձնացնում է պատմելու հետևյալ տեսակները. մանրամասն կամ բնագրին հարազատ պատմել, համառոտ պատմել, ընտրովի պատմել, դատողություններով կամ մեկնաբանություններով պատմել, ձևափոխված պատմել, ստեղծագործաբար պատմել, շարունակելով պատմել, պատմել որպես մասնակից և պատմել որպես ականատես[2]: Պատմելու բոլոր տեսակներն էլ մենախոսություններ են, իսկ պատմելու բոլոր ձևերով վերարտադրելու կարողությունները զուգահեռաբար են ձևավորվում:

Լեզվական և հաղորդակցական կարողություններն անկյունաքարային են ցանկացած գործունեություն ծավալելու ընթացքում: Այս կարողության բնականոն զարգացումով է պայմանավորված նաև հանրակրթական հաստատությունում սովորողի զարգացումն ու մտավոր առաջընթացը, ուստի և ցանկացած ուսումնական գործընթացի անբաժանելի ու փոխկապակցված բաղադրիչը հենց բնականոն զարգացող հաղորդակցումն է: Ուսուցիչը պետք է ամեն կերպ նպաստի այս կարողության զարգացմանը, որը կհամապատասխանի տարիքային առանձնահատկություններին: Շատ կարևոր է մայրենիի դասաժամի ընթացքում պայմաններ ստեղծել, որ դասի ընթացքում սովորողի դերը լինի ավելի ակտիվ, նա ուղղակի կերպով լինի դասի ընթացքի կենտրոնում, չլինի պասիվ, այլ հնարավորինս շատ խոսի, մեկնաբանի, կարծիք հայտնի: Ակտիվ խոսքը հնարավորություն է

[1] Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, Երևան 2014թ., http://multiurok.ru/files/tarrakan-dasarani-ent-erts-anowt-yown.html?wBurberry-95.html&fbclid=IwAR1WZy1Q807VX-sWLrpfHSlrwLZ9D6Ys84Dqd2gmPy_lFnddNvjYGXEkXjQ

[2] Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2018, էջ 163

տալիս, որ սովորողն ավելի արագ զարգացնի կապակցված խոսքը, հղկի, կոկի, գեղեցկացնի այն:

Այնուամենայնիվ, այս առումով շատ կարևոր է ուսուցչի մոտեցումը, քանի որ նրա մեթոդական զինանոցն ուղղակի կերպով կարող է ազդել սովորողի ակտիվության վրա, դնել նրան շարժման մեջ, ինչն էլ ուղիղ համեմատական է արդյունավետ վերջնարդյունքին:

Պայմանականորեն դասավանդման մեթոդները կարելի է բաժանել 2 խմբի՝ ավանդական և ժամանակակից: Ավանդական ենք անվանում զննական, բացատրական այն մեթոդներին, որոնց հիմքում ընկած է գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին, իսկ ժամանակակից մեթոդական համակարգը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքի, հմտության, կարողության ձեռքբերում: Ինտերակտիվ կամ փոխգործուն մեթոդական պաշարից տարրական դպրոցում կարելի է կիրառել հետևյալ մեթոդները՝ Մտագրոհ, ԳՈՒՍ, T-աձև աղյուսակ, M-աձև աղյուսակ, Վեննի դիագրամ, քառաբաժան և այլն:

Նմանօրինակ մեթոդների կիրառումը նպաստում է, որ դասարանում բարձրանա ակտիվության մակարդակը, հետաքրքրություն առաջանա խմբային աշխատելու, դրա արդյունքում հաղթական միավորներ վաստակելու, թիմում աշխատելու հանդեպ: Այս մեթոդների շնորհիվ դասարանն ուսուցչի համար դառնում է հեշտ կառավարելի: Խմբային աշխատանքների միջոցով կարելի է դասարանում ակտիվացնել համագործակցային աշխատանքը, խմբում ամեն մեկը կարող է արտահայտել իր կարծիքը, զեկուցողը կարող է ներկայացնել թիմի դիրքորոշումը, մյուս անդամները կարող են լրացումներ անել: Փաստորեն, ակտիվ մեթոդները և՛ նպաստում են սովորողի խոսքային մշակույթի զարգացման, և՛ ակտիվության բարձրացման, և՛ դրական ազդեցություն են ունենուն թիմում աշխատելու կարողության ձևավորման վրա: Կարծում ենք, որ եթե սովորողն ունի գեղեցիկ ու կապակցված խոսք, կարողանում է գեղեցիկ ու քերականորեն ճիշտ կառուցվածք ունեցող նախադասություններով շարադրել իր միտքը, չի կաշկանդվում խոսելիս, կարող է ինքնուրույն դատողություններ կատարել, ուստի ուսումնական առարկաների ուսումնասիրության ժամանակ կարող է գրանցել մեծ առաջադիմություն: Այս պարագայում վերջինս լրացուցիչ մոտիվացիայի կարիք չի ունենա:

Կցանկանայինք խոսել նաև ստեղծագործական մտածողության կարևորության մասին, ինչն անչափ կարևոր հանգամանք է ժամանակակից աշխարհում նորանոր

հաջողություններ ունենալու, առկա խնդիրներին հեշտ լուծումներ տալու, նոր գաղափարներ իրականացնելու հարցում: Ստեղծագործական մտածողությունը պատմելու միջոցով դառնում է կարևոր, քանի որ խոսքը մարդու հոգևոր մշակույթի համոզիչ ցուցանիշ է: Ստեղծագործ անհատի ձևավորումը ուսումնական գործընթացում օրապահանջ է: Այս գործընթացն իրականացվում է բոլոր ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում:

Իսկ ինչպե՞ս է իրականացվում դպրոցական պայմաններում սովորողների ստեղծագործականության ձևավորումը: Իհարկե, այս գործընթացում հստակ մշակված ռազմավարություն չկա, քանի որ յուրաքանչյուր սովորող ունի իր հետաքրքրությունների շրջանակն ու ստեղծագործելու մոտիվները, իսկ ուսուցիչներից ամեն մեկն ինքն է որոշում թե ինչ եղանակով պետք է հասնի այս վերջնարդյունքին: Մի բան հաստակ է. այսօր շատ է խրախուսվում ստեղծագործական մտածողությունը, նորարարությունը, հնարամտությունը, ուստի ուսուցիչն այս տեսակետից լայնածավալ աշխատանք է իրականացնում առարկայի ուսուցման ընթացքում:

Ստեղծագործականության զարգացումը սովորողին ոգեշնչում է, մոտիվացիա տալիս էլ ավելի շատ գիտելիք ու կարողունակություն ձեռք բերելու, առանց ստեղծագործականության, սովորողը կդադարի լինել յուրահատուկ, ինքնատիպ, նորարար, կդժվարանա ինքնուրույն գործել, ելքեր փնտրել դժվար իրավիճակներում, լուծել իր առաջ դրված խնդիրները:

Ինչպես նշեցինք, կրթության և դաստիարակության գործընթացում ստեղծագործ անհատականության զարգացումը ժամանակակից կրթական համակարգի կարևոր խնդիրներից մեկն է: Որպես կրթության բարձրագույն նպատակ՝ կարելի է դիտարկել ինքնազարգացող անհատականության ձևավորումը, ով ունակ է համագործակցել ստեղծագործական միջավայրի և հասարակության հետ: Սա նաև հանրակրթության նկատմամբ պետության տեսակետն է: Հանրակրթության նպատակներըի և պետական քաղաքականության սկզբունքների բաղադրամաս է նաև՝ « Ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը»[3]:

[3] https://www.arlis.am/documentview.aspx?docID=140362 ՀՀհանրակրթության մասին օրենք, հոդված 5,կետ 4:

Սովորողի համար պետք է անընդհատ ապահովել շփման ու հաղորդակցման համար լիարժեք պայմաններ: Սովորողը պետք է վստահի խոսակցին, ցանկանա խոսել, հաղորդակից դարձնել իր մտքերին, պամի իր ներսում եղած խոհերի մասին: Դա հնարավոր է ապահովել միայն համապատասխան միջավայրի, բարյացակամ վերաբերմունքի և ուշադիր, հետաքրքրասեր ունկնդրության մթնոլորտ ստեղծելու դեպքում: Պակաս կարևոր չէ չկաշկանդել սովորողի ինքնուրույն մտածողությունն ու դրանից բխող ոչ հավաստի ու մտացածին խոսքը, քանի որ ցանկացած միտք պետք է հնչի, որպեսզի կյանքի այդ կարևոր փուլում սովորողը ստանա բոլոր անհայտների պատասխանները:

Հարկավոր է թույլ տալ, որ սովորողը իր մեջ կուտակված ֆանտազիաները, պատկերացումներն ու երազանքներն անպայման արտաբերի: Այսպես մենք չենք նվաստացնում նրա կամարտահայտության իրավունքը, ավելին՝ նա ավելի արագ է ինտեգրվում սոցիալական միջավայր, գիտակցում իր դերը՝ աշխարհին նայելով ստեղծագործ աչքերով:

Ուսումնառության ընթացքում հեգեբանական հարմարմարավետ պայմաններն ու բարենպաստ մթնոլորնտն միաժամանակ և' զարգացնող, և հոգեշտկող նշանակություն ունեն: Նման պայմաններում սովորողների ամբողջ էներգիան ծախսվում է ոչ թե ահնգանգստության, վախի տագնապի, այլ ուսումնական գործունեության, նոր գաղափարների և մտահաղացումների, ստեղծագործական կարողությունների դրսևորումների ուղղությամբ[4]:

Հաշվի առնելով այս ամենը՝ կարող ենք արձանագրել, որ մանկավարժն ինքը պետք է ունենա մարդկային բարձր որակներ, գիտակցական բարձր մակարդակ, սովորելու, ինքնակրթվելու ցանկություն, համախբելու, թիմային աշխատանք կատարելու կարողություն: Անշուշտ, պակաս կարևոր չէ ուսուցչի ընդհանուր գիտական պատրաստվածության բարձր մակարդակը: Ուսուցչի գերխնդիրն է, նաև, որ սովորողն ամեն կերպ յուրացնի դասանյութը, դասարանը հաղորդվող նյութն ընկալի համաչափ: Հետաքրքրաշարժ խնդիրների ու առաջադրանքների լուծման, գործնական չափումների և հաշվարկների միջոցով սովորողների մոտ հետաքրքրություն առաջացնելով առարկայի նկատմամբ՝ ուսուցիչը ստանում է իր խնդրի լուծումը:

Տարիքային այս խմբում սովորողն առավել հաճախ հիշում ու մտապահում է այն ամենը, ինչն ավելի կիրառական է և այս կամ այն կերպ ազդում է նրա զգայարանների վրա՝ տեսողական, լսողական, շոշոփելիքի, ուստի գործնական

---

[4] http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2013(4).pdf «Նախաշավիղ» հանդես, Երևան, 2013, էջ 10:

դասերը կնպաստեն սովորողների մոտ կայուն գիտելիքների ձևավորմանը, գործնական, համագործակցային կարողությունների զարգացմանը, նաև կհարստանա բառային պաշարը:

Մինչև վերջինս ակտիվ ստեղծագործական գործունեությամբ չմասնակացի գիտելիքների ձեռքբերման գործընթացին (գծել, կտրել, նկարել, կառուցել, ներկել, համեմատել, հակադրել, մտածել, խոսել, դատել, եզրակացնել), նա չի կարող ամբողջությամբ հասկանալ ,մտապահել գիտելիքները և իմաստավորել դրանք:

1.2 Խաղային տեխնոլոգիաների կիրառումը՝ որպես կրտսեր դպրոցականին մոտիվացնելու միջոց

Հայտնի է, որ խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է: Այն ծագում է մանկության շրջանում և մարդուն ուղեկցում ողջ կյանքի ընթացքում: Անշուշտ, դիդակտիկ խաղերի միջոցով ուսուցումն ընթանում է խոսքի ուղեկցմամբ: Հենց այս հանգամանքը հաշվի առնելով՝ կարող ենք պնդել, որ կրտսեր դպրոցում խաղային մեթոդներով ուսուցման ընթացքում կարելի է զարգացնել սովորողի գիտելիքները, հմտությունները, կապակցված խոսքն ու պատկերավոր մտածողությունը:

Խաղային գործունեության մանկավարժական նշանակությունը երեխաների կյանքում կարևորել են Ա. Կոմենսկին, Ժ. Ռուսոն, Ֆ. Ֆրյոբելը մանկավարժներ Խ. Աբովյանը, Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը և այլք: Խ. Աբովյանը մանկավարժների հորդորում էր «չզրկել երեխային անմեղ խաղերից»: Հ. Թումանյանը գտնում էր, որ խաղը երեխայի բնական օրգանական պահանջն է , նրա էությունը: Օրինակ մայրենիի դասավանդման ժամանակ կարելի է կիրառել դերախաղ, բեմադրել առակը կամ հեքիաթը, ապա Տ-աձև աղյուսակի կիրառությամբ դասդասել լեզվական երևույթները, հեքիաթի, առակի հերոսներին՝ գտնելով նմանություններ ու տարբերություններ: Կիրառելով Վեննի դիագրամ, քառաբաժան մեթոդամանկավարժական հնարները՝ նույնպես կարելի է հարթակ ստեղծել, որ սովորողն ակտիվ կերպով արտահայտի սեփական դիրքորոշումը՝ հատկանշավորի, դասդասի, ընդհանրացնի, նմանություններ ու տարբերություններ գտնի:

Խոսքի արդյունավետ զարգացման, ինքնուրույն խոսքի ձևավորմանը խթանող, սովորողին մոտիվոցնելու ևս մի հնար է «Դասի զեկուցող» հնարը: Այս պարզագույն հնարը շատ կարևոր դեր կարող է ունենալ սովորողներին դասապրոցեսում ընդգրկելու գործում: Ուսուցիչն աշակերտներից մեկին նշանակում է դասի զեկուցող: Վերջինս դասի ավարտից 3-5 րոպե առաջ ամբողջ դասարանին ամփոփ ներկայացնում է, թե ինչի մասին էր դասը, ինչ արեցին, ինչ կարևոր բաներ սովորեցին:[5]

[5] «Ուսուցման արդյունավետ հնարներ», Երևան 2020, էջ 38:

Այսպիսով, ուսուցիչը խրախուսում է աշակերտակենտրոն ուսուցումը, հնարավորություն տալիս սովորողին ինքնաարտահայտվելու:Դպրոցական կրտսեր տարիքի աշակերտները հեշտ են մտնում ցանկացած գործունեության մեջ՝ հատկապես խաղային իրավիճակներում իրենց անկաշկանդ են զգում: Խաղային տեխնոլոգիաները կառուցվում են նպատակային՝ օգնելով սովորողին հասկանալ, արագ կողմնորոշվել, գտնել արդյունավետ լուծումներ:

Խաղային ինտերակտիվ տեխնոլոգիաների հնարավորությունները բավական լայն են.

- Դրանք թույլ են տալիս ընդգրկել հիմնախնդիրների լայն ասպեկտ:
- Համապատասխանում են գործունեության տրամաբանությանը:
- Նպաստում են ուսումնական գործընթացի մասնակիցների՝ առավել մեծ թվով ընդգրկմանը, նրանց մղում են հանպատրաստից ակտիվության:
- Ավելի հեշտությամբ են հաղթահարվում կարծրատիպերը, շտկվում է ինքնագնահատականը:
- Հնարավորություն են ստեղծում համակողմանի վերլուծություններ, մեկնաբանություններ կատարելու և ստացված արդյունքները իմաստավորելու:
- Նպաստում են անձի բոլոր որակների՝ անհատական դրական և բացասական ընդունակությունների արտահայտմանը և այլն:
- Բացի այդ, խաղային տեխնոլոգիաների նպատակները համաձայնեցվում են սովորողների պրակտիկ պահանջմունքներին[6]:

Դերային խաղերի միջոցով ուսուցումը երեխայի սոցիալական զարգացման հիմքն է: Քանի որ ուսուցման հիմքում ընդհանուր առմամբ խաղն է, ուստի աշակերտները հաճույքով են մասնակցում դասին: Դերախաղը նպաստում է, որ աշակերտը սովորի թիմում հարաբերություններ հաստատել, համապատասխան գործընկերներ գտնել: Բոլոր խաղերը, որոնք հիմնված են որոշակի պատմությունների դերախաղի վրա, մեծ նշանակություն ունեն երեխայի անհատականության զարգացման գործում, քանի որ խաղային մեթոդների միջոցով շատ դյուրին է կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մոտ ձևավորել և՛ սոցիալական, և՛ բարոյական զգացմունքներ: Տարրական օղակում դերային խաղերի կիրառությունը նպատակ ունի նաև աշակերտների մեջ զարգացնել արագ արձագանքելու, մտքերը ճիշտ ու հաջորդական դասավորելու կարողություն: Այս

[6] http://gspi.am/media/journal/2015n1b/8.pdf Լ.Վ.Գևորգյան, ժամանակակից ինտերակտիվ տեխնալոգիաների կիրառման առանձնահատկությունները, Երևան, 2015, էջ 75:

մեթոդով աշխատանքը մեծ օգնություն է մանկավարժներին, հատկապես նրանց, ովքեր նոր են սկսում իրենց գործունեությունը:

Ուսուցումը քարտային խաղերով, դիդակտիկ առարկաներով, ցուցապաստառներով, արդյունքները գրանցելու համար զանազան աղյուսակներով, դիագրամներով բավականաչափ արդյունավետ է, քանի որ դասը շարժուն է, ակտիվ, բոլոր աշակերտները ներգրավված են դասի փուլերի մեջ, ամեն մեկն իր չափով մասնակցում է ակտիվ գործնական աշխտանքներին, ուստի ակնկալվող վերջնարդյունքը միանշանակ լինելու է դրական: Խաղային մեթոդների օգնությամբ աշակերտի անհատականության ձևավորումը, տարբեր հմտությունների, կարողությունների և գիտելիքների ձեռքբերումը տեղի է ունենում բնական, առանց ավելորդ ու արհեստածին բաղադրիչների: Աշակերտը խաղային գործունեության ընթացքում անկաշկանդ է, չի լարվում, քանի որ խաղային մթնոլորտը նպաստում է, որ կրտսեր դպրոցականը լինի իր ափսեի մեջ:

Խաղային տեխնոլոգիաների կիրառումը զարգացնում է սովորողի գեղագիտական ճաշակը, բացահանտում վերջինիս թաքնված ներուժը, տաղանդը, հնարավորություն տալիս նախասիրությունները կիրառել դասի ընթացքի ժամանակ: Խաղային տեխնիկայի օգնությամբ շատ հեշտ է կանխել երեխայի մեջ այնպիսի բացասական հատկությունների զարգացումը, ինչպիսիք են մեկուսացումը, ծուլությունը: Ակտիվ մեթոդների կիրառությունը մեծապես զարգացնում է աշակերտի դատելու, քննադատաբար մոտենալու կարողությունը: Այսպիսով, շեշտադրվում է աշակերտի անհատականությունը:

Գնահատող և դատողական խոսք կառուցելու կարողության ձևավորման տեսակետից օգտակար են դասագրքի թեմատիկ նկարների շուրջ կապակցված պատմությունների ստեղծումը, տեսածի, լսածի, զգացածի ու խորհածի վերարտադրումը: Այս բոլոր դեպքերում երեխաները հակված են լինում կապակցված ձևով ու որոշակի համակարգով պատմել, խոսք կառուցել: Այս իմաստով բնականաբար ուսումնասիրվող յուրաքանչյուր նյութ աշակերտներն ամբողջությամբ վերարտադրում են, որպեսզի կարողանան կապակցված ու ավարտուն մտքեր արտահայտել:

Բանավոր խոսքի կառուցման և այդ խոսքում գնահատող ու դատողական մտքերը գործածելու կարողության ձևավորմանը մեծապես նպաստում են ուսուցչի խոսքը և աշակերտներին ուղղված նրա հարցերն ու առաջադրանքները: Հայտնի է, որ ուսուցչի խոսքը աշակերտների համար նմուշօրինակ է, և նրանք երբեմն, անգամ

ինքնաբերաբար, կրկնում են ուսուցչին, նրա դատողությունները, որոնք աստիճանաբար դառնում են սեփական ոճ[7]:

Ուսումնական գործունեության արդյունավետությունը, աշակերտների վերաբերմունքը ուսման նպատակամբ և նրանց բոլոր հաջողությունները հետագա գործունեության ընթացքում պայմանավորված են նաև մանկավարժահոգեբանական առանձնահատկություններով: Կրտսեր դպրոցական տարիքի երեխաներն ունեն կոնկրետ՝առարկայական մտածողություն. նրանք ավելի դյուրին են ընկալում, հասկանում և յուրացնում այն, ինչ կապված է իրենց կենսափորձի հետ, ինչ տեսել են, զգացել, ըմբռնել և կատարել են:

Նրանց մտածողությունը ձևերով, գույներով և ձայներով է: Կրտսեր դպրոցական տարիքը ճանաչողական գործունեության ակտիվացման փուլ է. նրանք սկսում են հետաքրքրվել և իրականացնել մտավոր պարապմունքներ, իրենց ունեցած և նոր յուրացրած գիտելիքները կիրառել նոր պայմաններում, պարզ եզրահանգումներ անել և այլն:[8]

Այսպիսով կարծում են, որ կրտսեր դպրոցում սովորողի մոտիվացիայի բարձրացումը մեծապես կապված է ուսուցչի կողմից դասի պլանավորման ճիշտ ու կառուցողական մոտեցումներից՝ այդ թվում խաղային տեխնոլոգիաների ակտիվ կիրառությունից: Այդ պարագայում դասը սովորողի համար կլինի հետաքրքիր ու կբարձրանա վերջինիս սովորելու, գիտելիք կուտակելու մոտիվացիան:

[7] «Մխիթար Գոշ», գիտամեթոդական հոդվածներ,Երևան 2020, էջ 263:
[8] Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան 2018, էջ 21

1.3 Դասավանդման մեր փորձից

Մեր աշխատանքային գործունեության ընթացքում հիմնականում կիրառում ենք խաղային տեխնոլոգիաներ, որպեսզի բարձր պահենք դասարանի ակտիվությունն ու դասը հետաքրքիր դարձնենք կրտսեր դպրոցականի համար: Բերենք աշխաանքային գործունեության ընթացքում հաճախ կիրառվող խաղային տեխնոլոգիաներից մի քանի օրինակ:

Դասարան՝ առաջին

Աշակերտների քանակ՝ 35

Ինչպես գիտենք, խաղային տեխնոլոգիաները հատկապես առաջին դասարանում առաջնահերթություն են, ուստի մայրենիի դասին հնչյունի, վանկի, բառի ձևի և իմաստի, նախադասության ուսուցման շրջանակներում կիրառում ենք խաղային տեխնոլոգիաներ: Կիրառել ենք խմբային խաղեր, շրջված հերթականություն, երբ սովորողը խառնված տառերից կամ վանկերից բառեր կարող է կազմել, մոտորիկան զարգացնելու համար սովորողներին հանձնարարվել է ներկել կամ ապլիկացիա անել համապատասխան տառը:

Գրաճանաչության նախաայբբենական շրջանն ամենաբարենպաստն է մի շարք բառերի արտասանության ճշգրտման, արտաբերական կառույցի մարզման ու ամրապնդման համար: Այս խնդրի լուծման համար կիրառել ենք դերերով կարդալու կամ պատմելու եղանակները: Ուշադրության ցրվածությունը սովորողների մոտ բացառելու համար հաճախ դիմել ենք ինքնուրույն աշխատանքների, թիմային մրցույթների օգնությանը:

Խոսքային կարողությունների, ստեղծագործականության զարգացման համար օգտագործել ենք շարունակիր տրված նախադասությունը հնարը, որի շրջանակներում սովորողները բանավոր պատմություններ են հորինել՝ շարունակելով մեկը մյուսին: Թիմային մտածելակերպը զարգացնելու համար դիմել ենք փոխգործուն թիմերի ստեղծման օգնությանը: Աշակերտներին բաժանել ենք 4 հոգուց բաղկացած փոքր աշխատանքային խմբերի՝ առաջարկելով նույն համարը կրող մասնակիցներին միանալ և խմբեր ստեղծել՝ «առաջիններ», «երկրորդներ», «երրորդներ», «չորրորդներ», հաջորդիվ կատարել ենք թե' լեզվական, թե' ստեղծագործական կարողությունների զարգացմանն ուղղված առաջադրանքներ: Մշտապես փորձել ենք ստեղծել հետադարձ կապ դասերի ժամանակ՝ հնարավորություն տալով սովորողին ինքնանդրադարձ կատարել: Կազմակերպել և

իրականացրել ենք ինտեգրված դասեր, որպեսզի առավել արդյունավետ զարգանա սովորողների մետաճանաչողությունը:

Այսպիսով, կարծում ենքն, որ մեր իրականացրած բազմաբնույթ ուսումնական առաջադրանքները կծառայեն իրենց նպատակին, և սովորողները հաջորդ դասարան մուտք կգործեն գերազանց գիտելիքների ու կարողունակությունների պաշարով՝ ի շնորհիվ խաղային տեխնոլոգիաների ակտիվ կիրառման:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն աշխատանքի վերլուծության արդյունքում կատարեցինք մի քանի արձանագրումներ, որոնք կամբողջացնենք, ընդհանրական տեսքի կբերենք ստորև: Աշխատության թեման անսպառ ուսումնասիրության և վերլուծության երկարատև աշխատանք է պահանջում, այնուամենայնիվ մի բան հստակ է, եթե մենք նպատակ ենք դնում ակտիվորեն ներգրավել սովորողին ուսումնառության գործընթացի մեջ, ապա պետք է հաշվի առնվեն վերջինիս հետաքրքրությունները, տարիքային առանձնահատկություններն ու նախասիրությունները:

Այս համատեքստում կրկին կցանկանանք շեշտադրել աշակերտակենտրոն ուսուցման կարևորությունը: Սովորողի հետ հաշվի նստել, լսել նրա կարծիքը, խրախուսել վերջինիս, ստուգման ընթացքում շեշտադրել ոչ թե սխալ, այլ ճիշտ բաղադրիչը, կարծում ենք, որ նման մոտեցումը սովորողին ու դասարանը կդարձնեն հեշտ կառավարելի, և մանկավարժն անպատճառ կհասնի հաջողության:

Խոսքի զարգացումը, անմիջական գործընթաց է, ուստի մանկավարժը պետք է շփման համար ստեղծի հարմարավետ պայմաններ, որպեսզի ամեն կերպ խրախուսվի անհատի գիտակցումը, ինքնուրույնության կարևորությունը աշակերտի մոտ: Ուսումնական թեմաների բարոյախրատական բաղադրիչները կօգնեն արժեհամակարգ, քննադատողական մտածողություն ձևավորելուն:

Այսպիսով, ուսուցիչը պետք է ստեղծի բոլոր նախապայմանները, որպեսզի կրտսեր դպրոցականը հնարավորինս արագ ու անցնցում ինտեգրվի հասարակություն ու նախաձեռնողի դերում լինի, ցանկանա սովորել ու իր սովորածը կիրառել ուսումնական հաստատությունից դուրս: Խաղային տեխնոլոգիաները մեծ չգնական են ուսուցչին այս վերջնարդյունքին հասնելու համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով հետազոտության ընթացքում կատարած արձանագրումները՝ բերենք մի քանի առաջարկություններ.

- Սովորողների մոտիվացիայի բարձրացման համար ավելի բարենպաստ պայմաններ կարող են ստեղծել արտադասարանական պարապմունքները, ուստի նպատակահարմար կլինի նմանօրինակ դասեր էլ ավելի շատ անցկացնել:
- Ցանկալի է, որ դասերի ընթացքում սովորողի համար դրվեն այնպիսի խնդիրներ, որոնք կստիպեն վերջինիս մտածել, լուծումներ գտնել ինքնուրույն: Այսպես կարելի է բարձրացնել սովորողի աշխատունակությունն ու հիմք նախապատրաստել մետաճանաչողության զարգացման համար:
- Պետք է ամեն կերպ խրախուսել ուսուցիչների համագործակցությունը ինտեգրված դասերի անցկացման շրջանակներում, որոնց մեջ ներառված կլինեն խաղային տեխնոլոգիաներ:
- Սովորողին ինքնուրույնություն տալով՝ մենք ապահովագրում ենք նրա բարեկեցիկ ապագան, ուստի աշակերտակենտրոն աշխատելաոճը պետք է գերակայի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. http://multiurok.ru/files/tarrakan-dasarani-ent-erts-anowt-yown.html?wBurberry-95.html&fbclid=IwAR1WZy1Q807VX-sWLrpfHSlrwLZ9D6Ys84Dqd2gmPy_lFnddNvjYGXEkXjQ Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, Երևան 2014:
2. Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2018:
3. https://www.arlis.am/documentview.aspx?docID=140362 ՀՀհանրակրթության մասին օրենք:
4. http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2013(4).pdf «Նախաշավիղ» հանդես, Երևան:
5. «Ուսուցման արդյունավետ հնարներ», Երևան 2020:
6. http://gspi.am/media/journal/2015n1b/8.pdf Լ.Վ.Գևորգյան, ժամանակակից ինտերակտիվ տեխնալոգիաների կիրառման առանձնահատկությունները, Երևան, 2015: